

Բյուրեղավանի № 2 միջնակարգ դպրոցի տիպային շենքը կառուցվել է 1966 թվականին: Ավանի բնակչության թվի աճով պայմանավորված անհրաժեշտություն առաջացավ կառուցուի տիպային շենք: Շենքը կառուցվեց 500 աշակերտի համար: Քանի որ ռուսալեզու բնակչությունը որոշակի տոկոս էր կազմում (132 ընտանիք), ուստի դպրոցում բացվեց ռուսական սեկտոր: Ռուսական կրթություն ստանալ ցանկացողների թիվը հասավ 1600-ի, կառուցվեց նոր` (№ 1) դպրոց: Մինչև 1990-ական թթ. երեխաների թիվը դպրոցում հասել էր 576-ի: 90-ական թվականներին` արտագաղթի և պատերազմի պատճառով աշակերտներ թիվը նվազեց` հասնելով 278-ի (հայկական և ռուսակա բաժինները միասին):

2004 թվականին դպրոցում` զուտ հայկական սեկտորում, սովորում էր մոտավորապես 400 աշակերտ: Տասնամյակներ շարունակ դպրոցում չեն կատարվել վերանորոգման աշխատանքներ ուստի դպրոցի շենքային պայմանները հեռու են բավարար լինելուց: 2007-2008 թթ. օգոստոսին «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» միջոցով անց է կացվել լոկալ ջեռուցում: 2007-2008 ուսումնական տարուց դպրոցը ջոռուցվում է, դպրոցի ջանքերով և սոցիալական ներդրումների միջոցով ձեռք է բերվել դպրոցական կահույք, 15 համակարգիչ, ձևավորվել է համակարգչային կաբինետ: 2009 թվականի ամռանը դպրոցի ճակատային մի հատված ցանկապատվեց և դարպաս դրվեց, առաջամասային հատվածը, որը անմխիթար վիճակում էր, ասֆալտապատվեց, ճակատային մասի պատուհանները ներկվեցին (էլեկտրոցանցի տնօրեն Ռոմիկ Մկրտչյանի անձնական միջոցներով):

2010 թվականին դպրոցը միջնաժամկետ ծրագրում է, «Իսկ դա նշանակում է հուսալ ու սպասել»- ասում է դպրոցի տնօրեն Զ. Ասատրյանը:

2009-2010 ուսումնական տարում աշակերտների թիվը եղել է 524: Դպրոցի շրջանավարտներից շատերը, ստանալով բարձրագույն կրթություն, այսօր աշխատում են ինչպես հանրապետության, այնպես էլ նրա սահմաններից դուրս` բարձր պահելով դպրոցի պատիվը: Նշենք նրանցից մի քանիսի անունները` Միքայել Միքայելյան` զինվորական հոսպիտալի գլխավոր բժիշկ, Միեր Միքայելյան` ռազմական բժիշկ, Պարույր Միրոյան` հայկական ԶԻՆ սպա: Դպրոցում աշխատել և աշխատում են նախկին շրջանավարտներ Գայանե Նանուշյանը (Հոլանդիա), Ռուզաննա Թովմասյանը, Մարիա Գալստյանը, Անժելա Մանուկյանը և այլոք:

Ռազմահայրենասիրական, մարզական, մշակութային, աշխատանքային դաստիարակության մակարդակը դպրոցում բարձր է: Գործում են բազմաթիվ խմբակներ. մեծ հաջողություններ և ակնառու նվաճումներ կան այդ ասպարեզում: Դպրոցն ամեն տարի մեծ շուքով նշում է դպրոցի սան Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկ Ռուդոլֆ Շաբուրյանի ծննդյան տարեդարձը, որին մշտապես ներկա են լինում նաև երկրապահ ազատամարտիկներ: Բյուրեղավանի № 2 միջնակարգ դպրոցի տնօրեններն ըստ տարեթվերի`

1966 -1969 – Խիզանցյան Մարտիրոս

1969-1974_ Գասպարյան Յուլիա

1974-1979_ Մարուքյան Գրիգոր

1979-1991_ Պոլյանսկայա Գալինա

1991-1993_ Բաբոյան Վիգեն

1993- այսօր (2011թ.) Ասատրյան Զուլիխտա:

2010 թվականի սեպտեմբերի դպրոցն իր ուսումնական տարին սկսեց որպես հիմնական դպրոց: Այն իր դռները բացեց մինչև 9-րդ դասարան հաճախող պատանիների այդ թվում

առաջին անգամ դպրոց հաճախող Բյուրեղավանի բոլոր 140 աշակերտների համար:

{comments off}